

Գլուխ VI-ի բողոքի գործընթացը

Գլուխ VI-ն արգելում է խտրականությունն առաջի, մաշկի գույնի և ազգային ծագման հիման վրա: Ազգային ծագում նշանակում է այն ազգը, որտեղ ծնվել է տվյալ անձը կամ որտեղ ծնվել են այդ անձի ծնողները կամ նախնիները: «Foothill Transit»-ի քաղաքականությունն է, որ բոլոր մարդիկ՝ անկախ առաջից, մաշկի գույնից, ազգային ծագումից կամ լեզվական կարողություններից, ունենան ծառայություններ ստանալու հավասար իրավունքներ:

Ցանկացած անձ, ով կարծում է, որ ինքը «Foothill Transit»-ի կողմից ենթարկվել է առաջի, մաշկի գույնի կամ ազգային ծագման վրա հիմնված խտրականության, կարող է Գլուխ VI-ի բողոք ներկայացնել՝ լրացնելով և ուղարկելով «Foothill Transit»-ի Գլուխ VI-ի բողոքի ձևը: Հայցվորը կարող է նաև զանգահարել 1-800-743-3463 հեռախոսահամարով բողոք ներկայացնելու համար: Ձևը կարող եք գտնել «Foothill Transit»-ի կայքում՝ <http://www.foothilltransit.org/titlevi/> կամ <http://www.foothilltransit.org/library/> կամ «Foothill Transit»-ի ցանկացած խանութում կամ «Foothill Transit»-ի վարչական գրասենյակում Արևմտյան Քոլինայում: Foothill Transit-ի Title VI Program-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք զանգահարել 1-800-743-3463 հեռախոսահամարով:

Ձևը կարող եք փոստով ուղարկել կամ ներկայացնել «Foothill»-ի վարչական գրասենյակներ կամ «Transit» խանութներ հետևյալ հասցեներով՝

- Արևմտյան Քոլինայում «Transit» խանութ և վարչական գրասենյակներ՝ 100 S. Vincent Avenue 2nd Floor, West Covina, CA 91790
- Քլեմոնթում՝ 200 W. 1st Street Claremont, CA 91711
- Ինդյաթի քաղաքի «Puente Hills Mall»-ում՝ 1600 Azusa Avenue Industry, CA 91748
- Էլ Մոնթե կայարանում՝ 3501 Santa Anita Avenue El Monte, CA 91731
- Փոմոնայում՝ 100 W. Commercial Street Pomona, CA 91768

Հայցվորը կարող է նաև բողոք ներկայացնել անմիջապես Փոխադրամիջոցների դաշնային ադմինիստրացիա՝

- FTA Office of Civil Rights, 1200 New Jersey Avenue SE, Washington, DC 20590

«Foothill Transit»-ը խրախուսում է հայցվորին հնարավոր միջադեպից հետո հնարավորինս շուտ բողոք ներկայացնել՝ ամբողջական հետաքննությունն ապահովելու համար: Բացի դրանից, հայցվորը խրախուսվում է տրամադրել պահանջվող լրիվ տեղեկությունները՝ ամբողջական հետաքննությունն ապահովելու համար: Երբեմն հետաքննության ընթացքում կիրառվում են վիդեո նյութեր «Foothill



Foothill Transit

Գլուխ VI-ի բողոքի ձև

«Foothill Transit»-ը հանձն է առել երաշխավորելու, որ ինչպես ենթադրում է 1964 թ. Քաղաքացիական իրավունքների մասին օրենքի Գլուխ VI-ը, չի լինի որևիցե անձ, ով ռասայի, մաշկի գույնի կամ ազգային ծագման պատճառով զրկվի ծառայություններից կամ դրանց հետ կապված նպաստներից օգտվելու հնարավորությունից: Գլուխ VI-ի հետ կապված բողոքները պետք է ներկայացվեն հնարավոր խտրականության միջադեպից հետո՝ 180 օրվա ընթացքում:

Հետևյալ տեղեկություններն անհրաժեշտ են մեզ որպես օժանդակություն՝ Ձեր բողոքի քննարկման գործընթացում: Սույն ձևը լրացնելու կամ գրավոր բողոք ներկայացնելու հետ կապված օգնության կարիք ունենալու դեպքում, դիմեք մեր Հաճախորդների մեկնաբանության ներկայացուցիչներին՝ 800-743-3463 հեռախոսահամարով կամ այցելեք մեր «Transit» *խանութներից* մեկը: Լրացված ձևը պետք է վերադարձնել «Foothill Transit» այս հասցեով՝ Title VI - Customer Comments at 100 S. Vincent Ave., Suite 200, West Covina, CA 97190:

Ձեր անունը՝	Հեռախոսահամարը՝
Հասցեն՝	Այլ հեռախոսահամար՝
Քաղաքը, նահանգն ու փոստային ինդեքսը՝	
Խտրականության ենթարկված անձը/անձինք (եթե կա ևս մեկը՝ բողոքատուից բացի) Անուն(ներ)՝	
Հասցե՝	Հեռախոսահամար՝
Միջադեպի ամսաթիվը՝	Ավտոբուսի համարը/Ընթացքը/Վայրը (եթե կիրառելի է)՝

Շարունակությունը հակառակ կողմում է...

Transit»-ի ավտոբուսներից: Սակայն այդ նյութերը պահվում են միայն 7-ից 14 օր՝ կախված հանգամանքներից:

Ըստ «Foothill Transit»-ի քաղաքականության, հայտարարությունը հետաքննվում է, քայլեր են ձեռնարկվում դրա շուրջ և հարցը փակվում է հայտարարությունը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Այդ ժամանակահատվածում «Foothill Transit»-ը կարող է դիմել հայցվորին, եթե հավելյալ տեղեկություններ են հարկավոր գործը լուծելու համար: Եթե հայցվորը չներկայացնի պահանջվող տեղեկությունները, ապա «Foothill Transit»-ն ամեն ջանք կգործադրի առկա տեղեկության հիման վրա հետաքննությունը կատարելու համար: Ի լրացում դրան, եթե հայցվորը հետ է կանչում իր բողոքը կամ չի ցանկանում շարունակել հետաքննությունը, ապա գործը փակվում է:

Բողոքը հետաքննելուց հետո, անձնակազմի պատասխանատու անդամը կփորձի պատասխանել հայցվորին: Պատասխանը կնկարագրի հետաքննության էությունը և հայցին տրված լուծումը: Եթե հայցվորը ցանկանում է բողոքարկել որոշումը, ապա նա կարող է անել դա: «Foothill Transit»-ը խրախուսում է հայցվորին բողոքարկել որոշումը որքան հնարավոր է շուտ՝ ամբողջական հետաքննությունն ու պատասխանն ապահովելու համար: